# ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

*02-ը մայիսի 2016թ.*

## ԱՇՏԱՐԱԿ ՔԱՂԱՔԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԱՌԱՋԻՆ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԻ ՄԱՍԻՆ

*/Զեկուցող՝ Ա. ԽԱՉԱՏՐՅԱՆ/*

***N 1-Ն ՈՐՈՇՈՒՄ***

*Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 69 հոդվածի առաջին մասի, «Բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 35/1 հոդվածների պահանջներով, համայնքի ավագանին՝*

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է.**

- Ըստ ստորև բերված վերլուծության համայնքի 2016 թվականի բյուջեի առաջին եռամսյակի եկամուտների և ծախսերի կատարողականը ընդունել ի գիտություն:

| | *վարչական բյուջե* | *ֆոնդային բյուջե* | *Ընդ.* |
|---|---|---|---|
| Եկամտային մաս | 105533.8 | 709.6 | 106243.4 |
| Ծախսային մաս | 78290.0 | 11141.2 | 89431.2 |

ԱՎԱԳԱՆԻ՝

*ԿՈՂՄ - 9* *ԴԵՄ – 0* *ՁԵՌՆՊԱՀ - 0*

| | |
|---|---|
| ԱՆԴՐԵԱՍՅԱՆ ՆՈՐԻԿ | ՇԱՀԱԶԻԶՅԱՆ ԿԱՐԵՆ |
| ԳԱԼՍՏՅԱՆ ՏԻԳՐԱՆ | ՍԱՐԳՍՅԱՆ ԱՐՄԵՆԱԿ |
| ՀՈՒՆԱՆՅԱՆ ԱՇՈՏ | ՔԱՍՅԱՆ ՍՏՅՈՊԱ |
| ՄԿՐՏՉՅԱՆ ՎԱՀԱԳՆ | ՏԱՇՉՅԱՆ ՄՈՒՇԵՂ |
| ՆԱՀԱՊԵՏՅԱՆ ԱՐԹՈՒՐ | |

ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏ՝ Ա. Ա Ն Տ Ո Ն Յ Ա Ն

# ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

***02-ը մայիսի 2016թ.***

**ԱՇՏԱՐԱԿ ՔԱՂԱՔԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

*/Զեկուցող՝ Ա. ԽԱՉԱՏՐՅԱՆ/*

***Ν 2-Ն ՈՐՈՇՈՒՄ***

*Աշխատանքային անհրաժեշտությունից ելնելով, 2016թ.-ի բյուջեի առկա ֆինանսական միջոցները համամասնորեն բաշխելու, ինչպես նաև ծախսային մասն արդյունավետ կազմակերպելու նպատակով, առաջնորդվելով <Տեղական ինքնակառավարման մասին> ՀՀ օրենքի 16/3 և <Բյուջետային համակարգի մասին> ՀՀ օրենքի 33/4 հոդվածների պահանջներով, համայնքի ավագանին՝*

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է.**

- Հավանություն տալ Աշտարակ քաղաքի 2016թ.-ի տարեկան բյուջեի եկամտային մասի փոփոխության առաջարկությանը՝ համաձայն հատված 1-ի:
- Հավանություն տալ Աշտարակ քաղաքի 2016թ.-ի տարեկան բյուջեի ծախսային մասի փոփոխության առաջարկությանը՝ ըստ բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման, համաձայն հատված 2-ի:
- Հավանություն տալ Աշտարակ քաղաքի 2016թ.-ի տարեկան բյուջեի ծախսային մասի փոփոխության առաջարկությանը՝ ըստ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման,համաձայն հատված 3-ի:
- Հավանություն տալ Աշտարակ քաղաքի 2016թ.-ի տարեկան բյուջեի ծախսային մասի փոփոխության առաջարկությանը՝ ըստ բյուջետային ծախսերի գործառնական և տնտեսագիտական դասակարգման, համաձայն հատված 6-ի:
- «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝

ա) թույլատրել համայնքի ղեկավարին համայնքի բյուջեի կատարման ընթացքում կատարելու վերաբաշխումներ ըստ գործառնական և տնտեսագիտական դասակարգման ծախսերի նախատեսված հոդվածների միջև

/հազ.դրամ/

| | *վարչական բյուջե* | *ֆոնդային բյուջե* | *Ընդ.* |
|---|---|---|---|
| Եկամտային մաս | 464266.0 | 10745 | 475011.0 |
| Ծախսային մաս | 465723.0 | 34388.5 | 476611.5 |
| Դեֆիցիտ | -1457 | -23643.5 | -25100.5 |
| Պահուստային ֆոնդ | 23500 | 0 | 23500 |

**Ա Վ Ա Գ Ա Ն Ի՝**

*ԿՈՂՄ - 9* *ԴԵՄ – 0* *ՁԵՌՆՊԱՀ - 0*

ԱՆԴՐԵԱՍՅԱՆ ՆՈՐԻԿ — ՇԱՀԱԶԻԶՅԱՆ ԿԱՐԵՆ

ԳԱԼՍՏՅԱՆ ՏԻԳՐԱՆ — ՍԱՐԳՍՅԱՆ ԱՐՄԵՆԱԿ

ՀՈՒՆԱՆՅԱՆ ԱՇՈՏ — ՔԱՍՅԱՆ ՍՏՅՈՊԱ

ՄԿՐՏՉՅԱՆ ՎԱՀԱԳՆ — ՏԱՇՉՅԱՆ ՄՈՒՇԵՂ

ՆԱՀԱՊԵՏՅԱՆ ԱՐԹՈՒՐ

ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏ՝ Ա. Ա Ն Տ Ո Ն Յ Ա Ն

# ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

***02-ը մայիսի 2016թ.***

**ՎԱՐԴԱՆ ՆԱՎՈՅԱՆԻՆ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԵՎ ՀՈՂԻ ՀԱՐԿԻ ՄԱՍՈՎ ՀԱՐԿԱՅԻՆ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ**

*/Զեկուցող՝ Ա. ԽԱՉԱՏՐՅԱՆ/*

*N 3-Ա ՈՐՈՇՈՒՄ*

*Հիմք ընդունելով Վարդան Նավոյանի դիմումը, ղեկավարվելով <Տեղական ինքնակառավարման մասին> ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի, <Հողի հարկի մասին> ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի և <Գույքահարկի մասին> ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 3-րդ կետի պահանջներով, համայնքի ավագանին՝*

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է.**

Վարդան Նավոյանին տրամադրել հարկային արտոնություն՝

- գույքահարկի գծով 11,000 /տասնմեկ հազար/ ՀՀ դրամ գումարի չափով
- հողի հարկի գծով 20,950 /քսան հազար ինը հարյուր հիսուն/ ՀՀ դրամ գումարի չափով

Ա Վ Ա Գ Ա Ն Ի՝

*ԿՈՂՄ - 9* *ԴԵՄ – 0* *ՁԵՌՆՊԱՀ - 0*

**ԱՆԴՐԵԱՍՅԱՆ ՆՈՐԻԿ**
**ԳԱԼՍՏՅԱՆ ՏԻԳՐԱՆ**
**ՀՈՒՆԱՆՅԱՆ ԱՇՈՏ**
**ՄԿՐՏՉՅԱՆ ՎԱՀԱԳՆ**
**ՆԱՀԱՊԵՏՅԱՆ ԱՐԹՈՒՐ**
**ՇԱՀԱԶԻԶՅԱՆ ԿԱՐԵՆ**
**ՍԱՐԳՍՅԱՆ ԱՐՄԵՆԱԿ**
**ՔԱՍՅԱՆ ՍՏՅՈՊԱ**
**ՏԱՇՉՅԱՆ ՄՈՒՇԵՂ**

**ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏ՝ Ա. Ա Ն Տ Ո Ն Յ Ա Ն**

# ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

***02-ը մայիսի 2016թ.***

**ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ <ՄԱՆՈՒՇԱԿ>, <ՀՈՎԻԿ>, <ԱՐԵՎԻԿ>, <ՀԱՍՄԻԿ>, <ԱՐԱՔՍ ՄՈՒՐԱԴՅԱՆԻ ԱՆՎԱՆ> ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶՆԵՐԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

---

*/Զեկուցող՝ Մ. ՏԱՇՉՅԱՆ/*

***N 4-Ն ՈՐՈՇՈՒՄ***

*Ղեկավարվելով <Տեղական ինքնակառավարման մասին> ՀՀ օրենքի 16/26 հոդվածի պահանջներով, հիմք ընդունելով ՀՀ ԿԳՆ աշխատակազմի կրթության պետական տեսչության պետի 04.04.2016թ.-ի հմ. 01/24.4/3239-16 հանձնարարականը, համայնքի ավագանին՝*

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է.**

1. Հաստատել Աշտարակ համայնքի <ՄԱՆՈՒՇԱԿ>, <ՀՈՎԻԿ>, <ԱՐԵՎԻԿ>, <ՀԱՍՄԻԿ>, <ԱՐԱՔՍ ՄՈՒՐԱԴՅԱՆԻ ԱՆՎԱՆ> մանկապարտեզների կանոնադրությունները՝ նոր խմբագրմամբ:

Ա Վ Ա Գ Ա Ն Ի՝

*ԿՈՂՄ - 9* *ԴԵՄ – 0* *ՁԵՌՆՊԱՀ - 0*

| | |
|---|---|
| **ԱՆԴՐԵԱՍՅԱՆ ՆՈՐԻԿ** | **ՇԱՀԱԶԻԶՅԱՆ ԿԱՐԵՆ** |
| **ԳԱԼՍՏՅԱՆ ՏԻԳՐԱՆ** | **ՍԱՐԳՍՅԱՆ ԱՐՄԵՆԱԿ** |
| **ՀՈՒՆԱՆՅԱՆ ԱՇՈՏ** | **ՔԱՍՅԱՆ ՍՏՅՈՊԱ** |
| **ՄԿՐՏՉՅԱՆ ՎԱՀԱԳՆ** | **ՏԱՇՉՅԱՆ ՄՈՒՇԵՂ** |
| **ՆԱՀԱՊԵՏՅԱՆ ԱՐԹՈՒՐ** | |

**ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏ՝** **Ա. Ա Ն Տ Ո Ն Յ Ա Ն**

# ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

***02-ը մայիսի 2016թ.***

**ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ <ՄԱՆՈՒՇԱԿ>, <ՀՈՎԻԿ>, <ԱՐԵՎԻԿ>, <ՀԱՍՄԻԿ>, <ԱՐԱՔՍ ՄՈՒՐԱԴՅԱՆԻ ԱՆՎԱՆ> ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶՆԵՐԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

---

*/Զեկուցող՝ Մ. ՅԱՇՉՅԱՆ/*

***N 5-Ա ՈՐՈՇՈՒՄ***

*Ղեկավարվելով <Տեղական ինքնակառավարման մասին> ՀՀ օրենքի 16/26 հոդվածի, ՀՀ ԿԳ նախարարի 02.01.2007թ.-ի <ՀՀ պետական և համայնքային նախադպրոցական ուսումնական հաստատությունների օրինակելի հաստիքացուցակը, խմբերի խտությունը, նորմատիվները հաստատելու մասին> հմ 29-Ն հրամանի հավելված 1-ի պահանջներով, հիմք ընդունելով ՀՀ ԿԳՆ աշխատակազմի կրթության պետական տեսչության պետի 04.04.2016թ.-ի հմ. 01/24.4/3239-16 հանձնարարականը, համայնքի ավագանին՝*

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է.**

1. Հաստատել Աշտարակ համայնքի <ՄԱՆՈՒՇԱԿ>, <ՀՈՎԻԿ>, <ԱՐԵՎԻԿ>, <ՀԱՍՄԻԿ>, <ԱՐԱՔՍ ՄՈՒՐԱԴՅԱՆԻ ԱՆՎԱՆ> մանկապարտեզների աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակն ու պաշտոնային նոր դրույքաչափերը՝ համաձայն կից հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2016թ.-ի հունիսի 1-ից:

**ԱՎԱԳԱՆԻ՝**

*ԿՈՂՄ - 9* *ԴԵՄ – 0* *ՁԵՌՆՊԱՀ - 0*

**ԱՆԴՐԵԱՍՅԱՆ ՆՈՐԻԿ**
**ԳԱԼՍՏՅԱՆ ՏԻԳՐԱՆ**
**ՀՈՒՆԱՆՅԱՆ ԱՇՈՏ**
**ՄԿՐՏՉՅԱՆ ՎԱՀԱԳՆ**
**ՆԱՀԱՊԵՏՅԱՆ ԱՐԹՈՒՐ**
**ՇԱՀԱԶԻԶՅԱՆ ԿԱՐԵՆ**
**ՍԱՐԳՍՅԱՆ ԱՐՄԵՆԱԿ**
**ՔԱՍՅԱՆ ՍՏՅՈՊԱ**
**ՏԱՇՉՅԱՆ ՄՈՒՇԵՂ**

**ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏ՝ Ա. Ա Ն Տ Ո Ն Յ Ա Ն**

# ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

***02-ը մայիսի 2016թ.***

**<ԱՇՏԱՐԱԿԻ ԿՈՄՈՒՆԱԼ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ> ՀՈԱԿ-Ի ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

---

*/Զեկուցող՝ Ա. ԱՆՏՈՆՅԱՆ/*

***N 6 - Ա ՈՐՈՇՈՒՄ***

*Ղեկավարվելով <Այլընտրանքային ծառայության մասին> ՀՀ օրենքի 17, <Տեղական ինքնակառավարման մասին> ՀՀ օրենքի 16/26 և <Իրավական ակտերի մասին> ՀՀ օրենքի 70-րդ հոդվածների պահանջներով, նշված անձի այլընտրանքային աշխատանքային ծառայությունը պատշաճ կազմակերպելու նպատակով, համայնքի ավագանին՝*

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է.**

1. <Աշտարակի կոմունալ ծառայություն> ՀՈԱԿ-ի հաստիքացուցակում բանվորների թիվը սահմանել 13 (տասներեք), որից 6-ի դրույքաչափը սահմանել 106000 դրամ, 7-ը (յոթ) նախատեսել այլընտրանքային ծառայողների համար:

<u>Ա Վ Ա Գ Ա Ն Ի՝</u>

*ԿՈՂՄ - 9* *ԴԵՄ – 0* *ՁԵՌՆՊԱՀ - 0*

ԱՆԴՐԵԱՍՅԱՆ ՆՈՐԻԿ
ԳԱԼՍՏՅԱՆ ՏԻԳՐԱՆ
ՀՈՒՆԱՆՅԱՆ ԱՇՈՏ
ՄԿՐՏՉՅԱՆ ՎԱՀԱԳՆ
ՆԱՀԱՊԵՏՅԱՆ ԱՐԹՈՒՐ
ՇԱՀԱԶԻԶՅԱՆ ԿԱՐԵՆ
ՍԱՐԳՍՅԱՆ ԱՐՄԵՆԱԿ
ՔԱՍՅԱՆ ՍՏՅՈՊԱ
ՏԱՇՉՅԱՆ ՄՈՒՇԵՂ

ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏ՝ Ա. Ա Ն Տ Ո Ն Յ Ա Ն

# ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

***02-ը մայիսի 2016թ.***

**ԳՈՌ ԱՏՈՄՅԱՆԻՆ <ԱՇՏԱՐԱԿԻ ԿՈՄՈՒՆԱԼ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ> ՀՈԱԿ-Ի ՏՆՕՐԵՆ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

---

*/Զեկուցող՝ Գ. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ/*

*N 7 - Ա ՈՐՈՇՈՒՄ*

*Հիմք ընդունելով Աշտարակի համայնքապետ Ա. Անտոնյանի 22.04.2016թ. N 81-Ա կարգադրությունը, ղեկավարվելով <Տեղական ինքնակառավարման մասին> ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 15-րդ կետի պահանջներով, համայնքի ավագանին՝*

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է.**

1. Համաձայնություն տալ Գոռ Ատոմյանին <Աշտարակի կոմունալ ծառայություն> ՀՈԱԿ-ի տնօրեն նշանակելու համայնքապետի առաջարկությանը:

Ա Վ Ա Գ Ա Ն Ի՝

*ԿՈՂՄ - 9* *ԴԵՄ – 0* *ՁԵՌՆՊԱՀ - 0*

| | |
|---|---|
| ԱՆԴՐԵԱՍՅԱՆ ՆՈՐԻԿ | ՇԱՀԱԶԻԶՅԱՆ ԿԱՐԵՆ |
| ԳԱԼՍՏՅԱՆ ՏԻԳՐԱՆ | ՍԱՐԳՍՅԱՆ ԱՐՄԵՆԱԿ |
| ՀՈՒՆԱՆՅԱՆ ԱՇՈՏ | ՔԱՍՅԱՆ ՍՏՅՈՊԱ |
| ՄԿՐՏՉՅԱՆ ՎԱՀԱԳՆ | ՏԱՇՉՅԱՆ ՄՈՒՇԵՂ |
| ՆԱՀԱՊԵՏՅԱՆ ԱՐԹՈՒՐ | |

**ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏ՝ Ա. Ա Ն Տ Ո Ն Յ Ա Ն**

# ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

***02-ը մայիսի 2016թ.***

**ԱՇՏԱՐԱԿ ՔԱՂԱՔԻ ՏԱՐԵՑՆԵՐԻ ԺԱՄԱՆՑԻ ՎԱՅՐԻ ԳՈՒՅՔԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԵՎ ՏԱՐԱԾՔԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՄԱՍԻՆ**

*/Զեկուցող՝ Գ. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ/*

*N 8 - Ա ՈՐՈՇՈՒՄ*

*Ղեկավարվելով <Տեղական ինքնակառավարման մասին> ՀՀ օրենքի 16/5 հոդվածի պահանջներով, համայնքի ավագանին՝*

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է.**

1.Աշտարակ քաղաքի տարեցների ժամանցի վայրի գույքի պահպանման և տարածքի անվտանգության ապահովման նպատակով Աշտարակ քաղաքի բնակիչ Կարապետ Գարեգինի Գալստյանին /անձ. 005225958/ հատկացնել ամենամսյա դրամական աջակցություն՝ 15 000 /տասնհինգ հազար/ ՀՀ դրամի չափով:

2. Հիմք ընդունելով 2016թ.-ի մարտի 1-ից աշխատելու փաստը, վճարումը կատարել նշված ժամկետից սկսած:

Ա Վ Ա Գ Ա Ն Ի՝

*ԿՈՂՄ - 9* *ԴԵՄ – 0* *ՁԵՌՆՊԱՀ - 0*

**ԱՆԴՐԵԱՍՅԱՆ ՆՈՐԻԿ**

**ԳԱԼՍՏՅԱՆ ՏԻԳՐԱՆ**

**ՀՈՒՆԱՆՅԱՆ ԱՇՈՏ**

**ՄԿՐՏՉՅԱՆ ՎԱՀԱԳՆ**

**ՆԱՀԱՊԵՏՅԱՆ ԱՐԹՈՒՐ**

**ՇԱՀԱԶԻԶՅԱՆ ԿԱՐԵՆ**

**ՍԱՐԳՍՅԱՆ ԱՐՄԵՆԱԿ**

**ՔԱՍՅԱՆ ՍՏՅՈՊԱ**

**ՏԱՇՉՅԱՆ ՄՈՒՇԵՂ**

**ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏ՝** **Ա. Ա Ն Տ Ո Ն Յ Ա Ն**

# ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

***02-ը մայիսի 2016թ.***

## ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՊԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆ ՀԱՍՏԻՔՆԵՐԻ ՑԱՆԿՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

---

*/Զեկուցող՝ Գ. ԴԱՏՈՒՄՅԱՆ/*

*N 9 - Ա ՈՐՈՇՈՒՄ*

*Ղեկավարվելով <Տեղական ինքնակառավարման մասին> ՀՀ օրենքի 16/26, <Իրավական ակտերի մասին> ՀՀ օրենքի 70-րդ հոդվածների պահանջներով, համայնքի ավագանին՝*

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է.**

1. Աշխատակազմի պայմանագրային <Գործավար> չորս հաստիքներից մեկը դարձնել <Գործավար-իրավախորհրդատու>:

**Ա Վ Ա Գ Ա Ն Ի՝**

*ԿՈՂՄ - 9* *ԴԵՄ – 0* *ՁԵՌՆՊԱՀ - 0*

ԱՆԴՐԵԱՍՅԱՆ ՆՈՐԻԿ
ԳԱԼՍՏՅԱՆ ՏԻԳՐԱՆ
ՀՈՒՆԱՆՅԱՆ ԱՇՈՏ
ՄԿՐՏՉՅԱՆ ՎԱՀԱԳՆ
ՆԱՀԱՊԵՏՅԱՆ ԱՐԹՈՒՐ
ՇԱՀԱԶԻԶՅԱՆ ԿԱՐԵՆ
ՍԱՐԳՍՅԱՆ ԱՐՄԵՆԱԿ
ՔԱՍՅԱՆ ՍՏՅՈՊԱ
ՏԱՇՉՅԱՆ ՄՈՒՇԵՂ

ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏ՝ Ա. Ա Ն Տ Ո Ն Յ Ա Ն

# ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

***02-ը մայիսի 2016թ.***

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՇՏԱՐԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՈՐՈՇ ՀՈՂԱՄԱՍԵՐ ԱՃՈՒՐԴ-ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ**

*/Զեկուցող՝ Կ. ՀՈՎԵՅԱՆ/*

***N 10 – Ն ՈՐՈՇՈՒՄ***

*Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 67-70 հոդվածների, <Տեղական ինքնակառավարման մասին> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 20-րդ կետի դրույթներով, Աշտարակ համայնքի գլխավոր հատակագծին համապատասխան, համայնքի ավագանին՝*

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է.**

1. Համայնքի սեփականություն համարվող բնակավայրերի նշանակության որոշ հողամասեր աճուրդ-վաճառքի միջոցով օտարել և հաստատել մեկնարկային գին՝ համաձայն հավելված 1-ի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Ա Վ Ա Գ Ա Ն Ի՝

*ԿՈՂՄ - 9* *ԴԵՄ – 0* *ՁԵՌՆՊԱՀ - 0*

**ԱՆԴՐԵԱՍՅԱՆ ՆՈՐԻԿ**
**ԳԱԼՍՏՅԱՆ ՏԻԳՐԱՆ**
**ՀՈՒՆԱՆՅԱՆ ԱՇՈՏ**
**ՄԿՐՏՉՅԱՆ ՎԱՀԱԳՆ**
**ՆԱՀԱՊԵՏՅԱՆ ԱՐԹՈՒՐ**
**ՇԱՀԱԶԻԶՅԱՆ ԿԱՐԵՆ**
**ՍԱՐԳՍՅԱՆ ԱՐՄԵՆԱԿ**
**ՔԱՍՅԱՆ ՍՏՅՈՊԱ**
**ՏԱՇՉՅԱՆ ՄՈՒՇԵՂ**

**ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏ՝** **Ա. Ա Ն Տ Ո Ն Յ Ա Ն**

*Հավելված 1*

*Հաստատված է համայնքի ավագանու*
*02.05.2016թ. հմ. 10-Ն որոշմամբ*

## Հողերի աճուրդ-վաճառք

| Լոտ | Անվանումը | Գտնվելու վայրը | Ծածկագիրը | Մակերեսը /քմ/ | Նպատակային նշանակությունը | Հողատեսքը | Գործառնական նշանակությունը | Մեկնարկային գինը մեկ քմ կադաստրային արժեքի /%/ | Սահմանափակումներ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | հողատարածք | <Արա-1> թաղամաս | 154-001 | 846 | բնակավայրերի | | բնակելի | 65 | |
| 2 | հողատարածք | Ս. Շահազիզի փող. | 039-088-ից | 100 | բնակավայրերի | | հասարակական | 65 | |
| 3 | հողատարածք | Ն. Աշտարակեցու փող. | 173-001-ից | 60,9 | բնակավայրերի | | հասարակական | 65 | |
| 4 | հողատարածք<br>2 միավոր | Տիգրան Մեծի փ. N4 շենքի հարևանությամբ | 843-001-ից | 23,75 | բնակավայրերի | | բնակելի | 65 | |

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Գ. Դ Ա Տ ՈՒ Մ Յ Ա Ն

# ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

***02-ը մայիսի 2016թ.***

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՇՏԱՐԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՈՐՈՇ ՀՈՂԵՐ ԱՃՈՒՐԴ-ՎԱՃԱՌՔՈՎ ԵՎ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ԹՈՒՅԼԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ**

*Զեկուցող՝ Կ. ՀՈՎԵՅԱՆ*

*N 11 - Ն ՈՐՈՇՈՒՄ*

*Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 66, 67-70 հոդվածների, <Տեղական ինքնակառավարման մասին> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 20-րդ կետի դրույթներով, Աշտարակ համայնքի գլխավոր հատակագծին համապատասխան, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը, համայնքի ավագանին՝*

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է.**

1. Համայնքային սեփականություն համարվող գյուղատնտեսական նշանակության որոշ հողեր աճուրդ-վաճառքի միջոցով օտարել և հաստատել մեկնարկային գին՝ համաձայն հավելված 2-ի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ԱՎԱԳԱՆԻ՝

*ԿՈՂՄ - 9* *ԴԵՄ – 0* *ՁԵՌՆՊԱՀ - 0*

| | |
|---|---|
| ԱՆԴՐԵԱՍՅԱՆ ՆՈՐԻԿ | ՇԱՀԱԶԻԶՅԱՆ ԿԱՐԵՆ |
| ԳԱԼՍՏՅԱՆ ՏԻԳՐԱՆ | ՍԱՐԳՍՅԱՆ ԱՐՄԵՆԱԿ |
| ՀՈՒՆԱՆՅԱՆ ԱՇՈՏ | ՔԱՍՅԱՆ ՍՏՅՈՊԱ |
| ՄԿՐՏՉՅԱՆ ՎԱՀԱԳՆ | ՏԱՇՉՅԱՆ ՄՈՒՇԵՂ |
| ՆԱՀԱՊԵՏՅԱՆ ԱՐԹՈՒՐ | |

ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏ՝ Ա. Ա Ն Տ Ո Ն Յ Ա Ն

*Հավելված 2*

*Հաստատված է համայնքի ավագանու*
*02.05.2016թ. հմ. 11-Ն որոշմամբ*

## Հողերի աճուրդ-վաճառք

| Լոտ | Անվանումը | Գտնվելու վայրը | Ծածկագիրը | Մակերեսը /քմ/ | Նպատակային նշանակությունը | Հողատեսքը | Գործառնական նշանակությունը | Մեկնարկային գինը նվազեցման /կադաստրային արժեքի %/ | Սահմանափակումներ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | հողատարածք | Արայի տեղամաս | 815-001-հց | 8,9791հա | գյուղ. | վարելահող | | 55 | |
| 2 | հողատարածք | Արայի տեղամաս | 634-032-հց | 0,234հա | գյուղ. | արոտ | | 100 | |
| 3 | հողատարածք | Արայի տեղամաս | 662-098-հց | 0,19հա | գյուղ. | արոտ | | 100 | |

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Գ. Դ Ա Տ ՈՒ Մ Յ Ա Ն

# ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

***02-ը մայիսի 2016թ.***

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՇՏԱՐԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԸ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԹՈՒՅԼԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

*/Զեկուցող՝ Կ. ՀՈՎԵՅԱՆ/*

***Ն 12 - Ա ՈՐՈՇՈՒՄ***

*Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 48[1] հոդվածի, <Տեղական ինքնակառավարման մասին> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 20-րդ կետի դրույթներով, Աշտարակ համայնքի գլխավոր հատակագծին համապատասխան, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը, համայնքի ավագանին՝*

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է.**

1. Կառուցապատման իրավունքով Թագուշ Մինասյանին Տիգրան Մեծի փողոցի N28ա շենքի հարևանությամբ տրամադրելու 20քմ հողատարածք 10 տարի ժամկետով՝ տարեկան 20 000 ՀՀ դրամ վճարով, առևտրի և սպասարկման տաղավարներ տեղադրելու համար:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

**ԱՎԱԳԱՆԻ՝**

*ԿՈՂՄ - 9* *ԴԵՄ – 0* *ՁԵՌՆՊԱՀ - 0*

| | |
|---|---|
| ԱՆԴՐԵԱՍՅԱՆ ՆՈՐԻԿ | ՇԱՀԱԶԻԶՅԱՆ ԿԱՐԵՆ |
| ԳԱԼՍՏՅԱՆ ՏԻԳՐԱՆ | ՍԱՐԳՍՅԱՆ ԱՐՄԵՆԱԿ |
| ՀՈՒՆԱՆՅԱՆ ԱՇՈՏ | ՔԱՍՅԱՆ ՍՏՅՈՊԱ |
| ՄԿՐՏՉՅԱՆ ՎԱՀԱԳՆ | ՏԱՇՉՅԱՆ ՄՈՒՇԵՂ |
| ՆԱՀԱՊԵՏՅԱՆ ԱՐԹՈՒՐ | |

**ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏ՝ Ա. Ա Ն Տ Ո Ն Յ Ա Ն**

# ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

***02-ը մայիսի 2016թ.***

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՇՏԱՐԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՀԱՅ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՍՈՒՐԲ ԵԿԵՂԵՑԻ ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ**

*|Զեկուցող՝ Կ. ՀՈՎԵՅԱՆ|*

*Ն 13 - Ա ՈՐՈՇՈՒՄ*

*Հիմք ընդունելով Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու Արագածոտնի թեմի առաջնորդ Մկրտիչ Եպիսկոպոս Պռոշյանի 23.02.2016թ. թիվ 16 գրությունը, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 64 հոդվածի, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 20-րդ կետի պահանջներով, Աշտարակ համայնքի գլխավոր հատակագծին համապատասխան, համայնքի ավագանին՝*

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է.**

1. Համաձայնություն տալ Աշտարակ քաղաքի Հայորդաց տան տարածքին կից, համայնքային սեփականություն հանդիսացող 500քմ հողամասը Հայորդաց տան սաների համար մանկական համալիր խաղահրապարակ կառուցելու համար անհատույց սեփականության իրավունքով Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցի Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին տրամադրելու մասին համայնքի ղեկավարի առաջարկությանը:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ԱՎԱԳԱՆԻ՝

*ԿՈՂՄ - 9* *ԴԵՄ – 0* *ՁԵՌՆՊԱՀ - 0*

| | |
|---|---|
| ԱՆԴՐԵԱՍՅԱՆ ՆՈՐԻԿ | ՇԱՀԱԶԻԶՅԱՆ ԿԱՐԵՆ |
| ԳԱԼՍՏՅԱՆ ՏԻԳՐԱՆ | ՍԱՐԳՍՅԱՆ ԱՐՄԵՆԱԿ |
| ՀՈՒՆԱՆՅԱՆ ԱՇՈՏ | ՔԱՍՅԱՆ ՍՏԵՓԱ |
| ՄԿՐՏՉՅԱՆ ՎԱՀԱԳՆ | ՏԱՇՉՅԱՆ ՄՈՒՇԵՂ |
| ՆԱՀԱՊԵՏՅԱՆ ԱՐԹՈՒՐ | |

ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏ՝ Ա. Ա Ն Տ Ո Ն Յ Ա Ն

# ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

*02-ը մայիսի 2016թ.*

**ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ, ՈՐՊԵՍ ՔԱՂԱՔԱՑՈՒ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՓՈԽԱՆՑՎԱԾ 863-026 ԾԱԾԿԱԳՐԻՑ 134 ՔՄ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ԱՃՈՒՐԴ-ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

*/Զեկուցող՝ Կ. ՀՈՎՅԱՆ/*

*N 14 - Ա ՈՐՈՇՈՒՄ*

*Նկատի ունենալով այն հանգամանքը, որ ՀՀ կառավարության 07.09.2006թ. N1398-Ն որոշմամբ համայնքին հանձնված 863-026 ծածկագրից 134քմ բնակավայրերի նշանակության հողամասը փոխանցվել էորպես ֆիզիկական անձի սեփականություն, սակայն իրականում վերը նշված հողատարածքը հանդիսանում էհամայնքային սեփականություն, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 32 հոդվածի 17 կետի, 38 հոդվածի պահանջներով և հիմք ընդունելով ՀՀԿԱԱԳԿՊԿ-ի նախագահի 01.06.2010թ. N186-Ն հրամանով հաստատված կադաստրային հատակագծերում և քարտեզներում հայտնաբերված սխալների ուղղման հրահանգը, համայնքի ավագանին ՝*

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է.**

1. Համայնքի վարչական տարածքում գտնվող, 863-026 ծածկագրից 134քմ բնակավայրերի նշանակության հողամասը ճանաչել համայնքային սեփականություն և հավանություն տալ աճուրդ-վաճառքով օտարելու մասին համայնքի ղեկավարի առաջարկությանը:

ԱՎԱԳԱՆԻ՝

*ԿՈՂՄ - 9* *ԴԵՄ – 0* *ՁԵՌՆՊԱՀ - 0*

| | |
|---|---|
| ԱՆԴՐԵԱՍՅԱՆ ՆՈՐԻԿ | ՇԱՀԱԶԻԶՅԱՆ ԿԱՐԵՆ |
| ԳԱԼՍՏՅԱՆ ՏԻԳՐԱՆ | ՍԱՐԳՍՅԱՆ ԱՐՄԵՆԱԿ |
| ՀՈՒՆԱՆՅԱՆ ԱՇՈՏ | ՔԱՍՅԱՆ ՍՏՅՈՊԱ |
| ՄԿՐՏՉՅԱՆ ՎԱՀԱԳՆ | ՏԱՇՉՅԱՆ ՄՈՒՇԵՂ |
| ՆԱՀԱՊԵՏՅԱՆ ԱՐԹՈՒՐ | |

ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏ՝ Ա. Ա Ն Տ Ո Ն Յ Ա Ն

# ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

***02-ը մայիսի 2016թ.***

**ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՓՈԽԱՆԱԿՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

---

*/Զեկուցող՝ Կ. ՀՈՎՀԵՅԱՆ/*

***N 15 - Ա ՈՐՈՇՈՒՄ***

*Հիմք ընդունելով Սահակ Ղազարյանի 16.03.2016թ. N 221 դիմումը, ղեկավարվելով <Տեղական ինքնակառավարման մասին> ՀՀ օրենքի 38/2, ՀՀ հողային օրենսգրքի 71, ինչպես նաև <Իրավական ակտերի մասին> ՀՀ օրենքի 70 հոդվածների պահանջներով, համայնքի ավագանին՝*

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է.**

1. Աշտարակ քաղաքի Ն. Սիսակյան փողոցի N6/1 հասցեում գտնվող, Սահակ Ղազարյանին սեփականության իրավունքով պատկանող 35քմ բնակավայրերի նշանակության հասարակական կառուցապատման հողամասը փոխանակել Աշտարակ-Ապարան մայրուղու ձախ հատվածում /քարի արտադրամասի հարևանությամբ/ գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող 3000-3200քմ գյուղատնտեսական նշանակության հողատարածքի հետ:

**Ա Վ Ա Գ Ա Ն Ի՝**

*ԿՈՂՄ - 9* *ԴԵՄ – 0* *ՁԵՌՆՊԱՀ - 0*

**ԱՆԴՐԵԱՍՅԱՆ ՆՈՐԻԿ** **ՇԱՀԱԶԻԶՅԱՆ ԿԱՐԵՆ**

**ԳԱԼՍՏՅԱՆ ՏԻԳՐԱՆ** **ՍԱՐԳՍՅԱՆ ԱՐՄԵՆԱԿ**

**ՀՈՒՆԱՆՅԱՆ ԱՇՈՏ** **ՔԱՍՅԱՆ ՍՏՅՈՊԱ**

**ՄԿՐՏՉՅԱՆ ՎԱՀԱԳՆ** **ՏԱՇՉՅԱՆ ՄՈՒՇԵՂ**

**ՆԱՀԱՊԵՏՅԱՆ ԱՐԹՈՒՐ**

**ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏ՝** **Ա. Ա Ն Տ Ո Ն Յ Ա Ն**

# ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

***02-ը մայիսի 2016թ.***

**ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՀԱՆՁՆՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՑԱՆԿԻՑ ԴՈՒՐՍ ՄՆԱՑԱԾ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

*/Զեկուցող՝ Կ. ՀՈՎՅԱՆ/*

***N 16 - Ա ՈՐՈՇՈՒՄ***

*Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ՀՀ կառավարության 07.09.2006թ. N1398-Ն որոշմամբ Աշտարակ համայնքին հանձնված հողամասերի ցանկից դուրս է մնացել 394-002 ծածկագրով 1733քմ գյուղատնտեսական նշանակության հողամասը, նկատի ունենալով, որ համայնքի վարչական սահմանների ճշգրտման արդյունքում պարզվել է, որ վերը նշված հողամասը իրականում հանդիսանում է համայնքային սեփականություն, ղեկավարվելով <Տեղական ինքնակառավարման մասին> ՀՀ օրենքի 16 հոդվածի պահանջներով, հիմք ընդունելով ՀՀ ԿԱԱԳԿՊԿ-ի նախագահի 01.06.2010թ. հմ. 186-Ն հրամանով հաստատված կադաստրային հատակագծերում և քարտեզներում հայտնաբերված սխալների ուղղման հրահանգը, համայնքի ավագանին՝*

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է.**

1.Համայնքի վարչական տարածքում գտնվող 394-002 ծածկագրով 1733քմ գյուղատնտեսական նշանակության հողամասը ճանաչել համայնքային սեփականություն:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

**Ա Վ Ա Գ Ա Ն Ի՝**

*ԿՈՂՄ - 9* *ԴԵՄ – 0* *ՁԵՌՆՊԱՀ - 0*

**ԱՆԴՐԵԱՍՅԱՆ ՆՈՐԻԿ**

**ԳԱԼՍՏՅԱՆ ՏԻԳՐԱՆ**

**ՀՈՒՆԱՆՅԱՆ ԱՇՈՏ**

**ՄԿՐՏՉՅԱՆ ՎԱՀԱԳՆ**

**ՆԱՀԱՊԵՏՅԱՆ ԱՐԹՈՒՐ**

**ՇԱՀԱԶԻԶՅԱՆ ԿԱՐԵՆ**

**ՍԱՐԳՍՅԱՆ ԱՐՄԵՆԱԿ**

**ՔԱՍՅԱՆ ՍՏՅՈՊԱ**

**ՏԱՇՉՅԱՆ ՄՈՒՇԵՂ**

**ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏ՝** **Ա. Ա Ն Տ Ո Ն Յ Ա Ն**